## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2015թվականի N 11-Ա

### ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 Թ-Ի ՄԱՅԻՍԻ 12-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ **ավագանին որոշում է.**

Հաստատել Շահումյան համայնքի 2015թ-ի մայիսի 12-ի նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

2015թ-ի մայիսի 12-ի թիվ 04 նիստի

1. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
2. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
3. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀՐԱՉ
4. ՂԱԶԱԽԵՑՅԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ
5. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2015թվականի N 12-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՛Տեղական ինքնակառավարման մասին՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով, ''Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածների 5-րդ մասի դրույթներով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2. Շահումյան գյուղական համայնքի ղեկավարին՝ Շահումյան գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկ շաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական մարմին:

3. Ուժը կորցրած ճանաչել՝ Շահումյան համայնքի ավագանու 2014թ-ի դեկտեմբերի 11-ի ,,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,, թիվ 34-Ա որոշումը:

4. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերը ուժի մեջ են մտնում Շահումյան համայնքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀՐԱՉ
4. ՂԱԶԱԽեցյան ՀԱՄԱԶԱՍՊ
5. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Հավելված
Շահումյան համայնքի ավագանու
2015 թվականի մայիսի 12-ի թիվ 12-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16 :
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 280000 |
| Ղեկավարի տեղակալ | 1 | 140000 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 200000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 130000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 125000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ | 4 | 125000 |
| Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 2 | 110000 |
| Տնտեսվար | 1 | 100000 |
| Վարորդ -մեխանիզատոր | 1 | 85000 |
| Վարորդ | 1 | 85000 |
| Բակապահ | 1 | 80000 |
| Տեխնիկական աշխատող | 1 | 75000 |

Շահումյան համայնքի ղեկավար Է. Մանուկյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ**
**ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2015թվականի N 13-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ և 17-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 10.04.2015թ-ի թիվ 44 դրական եզրակացությունը.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Լոռու մարզի Շահումյան համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերից, 06-084-0352-0001 ծածկագրով 0.25663 հա անտառի նպատակային նշանակությունը՝ հյուրանոցային համալիր կառուցելու նպատակով փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Առաջարկել համայնքի ղեկավար Է. Մանուկյանին իրականացնել իրավունքների պետական գրանցումը և համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀՐԱՉ
4. ՂԱԶԱԽԵՑՅԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ
5. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 ՄԱՅԻՍԻ 2015թվականի N 14-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ և 17-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 27.04.2015թ-ի թիվ 48/14 դրական եզրակացությունը.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ու Մ Է

1. Լոռու մարզի Շահումյան համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության 0.01 հա , /կադաստրային ծածկագիր 06-084-0004-0018-իգ/ հողամասը թվային հեռուստակայան կառուցելու նպատակով փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողերի կատեգորիա:

2. Առաջարկել համայնքի ղեկավար Է.Մանուկյանին իրականացնել իրավունքների պետական գրանցումը և համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀՐԱՉ
4. ՂԱԶԱԽԵՑՅԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ
5. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**